

**Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի «Գիտության պետական կոմիտեի մեկամյա գործունեությունը եւ 2009թ. ծրագրերը» թեմայով մամուլի ասուլիսի մեկնաբանությունները զանգվածային լրատվության միջոցներով**

**«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 05.02.2009**

**«Գիտությունը պետք է երիտասարդացնել»**

**Կարծում է գիտության պետական երիտասարդ կոմիտեի նախագահը**

Հայաստանում գիտությունը՝ որպես երկրի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման, կրթության, մշակույթի եւ հասարակության առաջընթացի կարեւորագույն գործոն, մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո: Գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակման եւ իրականացման համար դեռ 2007 թ. ստեղծված գիտության պետական կոմիտեն իր կարճատեւ գործունեության ընթացքում արձանագրել է բավականին լուրջ առաջընթաց: Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը երեկ ասուլիսում նշեց, որ առաջնայինը ոլորտում անհապաղ բարեփոխումների իրականացումն էր, որոնց միջոցով հնարավոր կլիներ նախանշել գիտության հետագա զարգացումը եւ նրա կապը տնտեսության հետ: 2008 թ. ընթացքում մշակվել է «ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրերի» ձեւը եւ իրականացվել գիտական եւ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող շուրջ 100 կազմակերպությունների անձնագրավորում: Ստեղծվել է կազմակերպությունների տվյալների էլեկտրոնային շտեմարան: Մշակվել է նաեւ «Հայ գիտնականների ներուժի համախմբման» ծրագիրը, որը նախատեսում է ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների իրականացմանը մասնակից դարձնել արտասահմանի հայ գիտնականներին: Քայլեր են կատարվում հատկապես գիտության երիտասարդացման ուղղությամբ: «Գիտությունը պետք է երիտասարդացնել, այն պետք է ծնի թարմ եւ խիզախ գաղափարներ: Նախորդ տարվանից սկսած ֆինանսավորված գիտական թեմաների մասնակիցների 25 տոկոսը երիտասարդ մասնագետներ են՝ մագիստրոսներ եւ ասպիրանտներ: Գիտաժողովների կամ գիտական գործուղումների հայտերի քննարկման ժամանակ առաջնայնությունը տրվել է երիտասարդ մասնագետներին: Բացի այդ, նախորդ տարի կոմիտեի ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել է 2 երիտասարդական դպրոց մեխանիկոսների եւ մաթեմատիկոսների համար, իսկ 2009 թ. կազմակերպվելու է գիտական թեմաների հայտերի մրցույթ՝ նախատեսված մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականների համար», - ասաց կոմիտեի նախագահը: Նախորդ տարվա ընթացքում աշխատանքներ են կատարվել նաեւ գիտության ոլորտի իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ. կոմիտեն մշակել էւ ՀՀ կառավարությանն է ներկայացրել մի շարք իրավական ակտերի նախագծեր: 2009 թ. նախատեսվում է մշակել եւ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել նաեւ մի շարք հիմնարար փաստաթղթեր, այդ թվում՝ ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարության նախագիծը:

**Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

**05-02-2006**

**«Առավոտ» օրաթերթ, 05.02.2009թ.  
«Գիտությունը՝ «Ափի» մեջ» հոդվածը**

**ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը  
ամփոփում է նախորդ տարվա արդյունքները**

«Գիտության նախարարություն ստեղծելը երկրի ղեկավարների որոշման խնդիրն է,- երեկ տեղի ունեցած ասուլիսին հայտարարեց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը եւ հավելեց: - Իմ համոզմամբ՝ միգուցե իմաստ ունեք ստեղծել առանձին նախարարություն՝ «Գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների նախարարություն» անվանմամբ: Բայց մեր ունեցած ներկայիս գործառույթները դրա համար բավարար չեն: Նախարարություն ստեղծվելու դեպքում պիտի դրանց ավելացվեն ինովացիոն գործունեությունը, գիտության առելուրայնացման խնդիրները, տեղեկատվական տեխնոլոգիաները»:

Ս. Հարությունյանն ամփոփեց շուրջ 1,5 տարի գործող կոմիտեի անցած ուղին եւ ապագա անելիքները: Ըստ պարոն Հարությունյանի ներկայացրած հաշվետվության՝ արդեն ավարտվել է կոմիտեի աշխատակազմի ձևավորումը, միայն 2 թափուր տեղի մրցույթ կհայտարարեն մինչեւ ապրիլ, 1-2 ամսից կոմիտեն կտեղափոխվի Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Ֆիզիոլոգիայի ինստիտուտի շենք:

2008-ին իրականացված ծրագրերից է գիտական աստիճաններ ունեցող անձանց շտեմարանների ստեղծումը, գիտական հիմնարկների՝ ըստ դրանց հետաքրքրությունների հնարավոր միավորումը, փորձագիտական անկախ համակարգի ստեղծումը, կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման մեթոդաբանության մշակումը, որոշ առումով կատարելագործվել է իրավական դաշտը եւ այլն: Բարեփոխումներից թերեւս «ամենացավոտը» գիտական կազմակերպությունների անձնագրավորման գործընթացն էր, որին «Առավոտը» ժամանակին անդրադարձել է: Խոսելով միջազգային համագործակցությունից՝ կոմիտեի նախագահը նշեց. «2008-ին Հայաստանում \$7 միլիոնի միջազգային ծրագրեր են իրականացվել»: Անդրադառնալով գիտական աշխատանքների՝ միջազգային հեղինակավոր ամսագրերում տպագրված լինելու խնդրին՝ Ս. Հարությունյանը նկատեց. «Ցավոք, խորհրդային ժամանակաշրջանի համեմատ միջազգային ամսագրերում հրապարակումների թիվը նվազել է, այն այժմ կազմում է տպագրված աշխատանքների 12%-ը»: Գիտության ասպարեզում առկա ֆինանսական «կնճիռների» մասին խոսելիս կոմիտեի ղեկավարն առանձնացրեց հավելավճարների հարցը. «Հայտնի է, որ գիտական աստիճան ունեցող անձինք, աշխատավարձից բացի, նաեւ հավելավճարներ են ստանում: Այստեղ կրկնություններ են նկատվում. պատահում է, որ նույն անձնավորությունը միանգամից մի քանի կազմակերպություններում է ներկայացված»: Մյուս խնդիրը վերաբերում էր գիտության ոլորտում աշխատող անձանց աշխատավարձերին: Ս. Հարությունյանը բարձրացրեց մի հարց, որը բնորոշ է հիմնարկների մեծամասնությանը. «Ցավոք, շատ գիտական հիմնարկներում աշխատավարձի սանդղակը չի պահպանվում. արդյունքում՝ գիտության դոկտորն ավելի ցածր աշխատավարձ է ստանում, քան ավագ լաբորանտը: Այդ երեւույթը վերացնելու առումով աշխատանքներ են տարվել»: Նա նշեց, որ վաղուց ժամանակն է անցնել ծրագրային ֆինանսավորման ձեւին, երբ գումար է հատկացվում ոչ թե անձին, այլ՝ ծրագրին: Լրագրողները հարցրին՝ մտավախություն չկա՞, որ գիտական ղեկավարները որոշ մարդկանց կկրճատեն՝ իրենց ավելի գումար պահելու նպատակով: Ս. Հարությունյանը պատասխանեց. «Կա նման մտավախություն, բայց ծրագրային ֆինանսավորումն աշխարհում ընդունված ամենաճիշտ ձեւն է: Անձին առանց հիմնավորման կոնկրետ աշխատավարձ տալը ոչ թե մեր, այլ սոցալանախարարության խնդիրն է»: Հարցին, թե գիտական աստիճան ունեցող անձանցից քանիսն են զբաղվում գիտական հետազոտական աշխատանքով, Ս. Հարությունյանն այսպես պատասխանեց.

«Հայաստանում կա ավելի քան 9000 գիտության դոկտոր եւ 4500 գիտության թեկնածու, բայց գիտական ծրագրերում ընդգրկված են շուրջ 600 դոկտոր եւ 2700 թեկնածու»:

2009-ի ծրագրերից են գիտական կազմակերպությունների ռեյտինգավորման մեթոդաբանության, գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մշակումը, «Գիտության եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը «Բարեփոխելը»:

**«Առավոտ» օրաթերթ**  
**Տաթև Հարությունյան**

**2009-02-05**

## **«Panorama.am» ինտերնետային լրատվամիջոց 16:30 04/02/2009**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԵԼ ԵՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ**

Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցություն ուղրտում անցյալ տարի մշակվել են գիտատեխնիկական համագործակցության մի շարք համաձայնագրեր: Այս մասին լրագրողներին տեղեկացրեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նա նշեց, որ գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրեր են մշակվել Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի, Ռումինիայի գիտական հետազոտությունների ազգային մարմնի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության, Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև: Նրա խոսքերով, ներկայացվել են առաջարկություններ միջազգային ուղրտում համագործակցության մի շարք գործնական ծրագրերի, պայմանագրերի և համաձայնագրերի վերաբերյալ: Ս. Հարությունյանի խոսքերով, գիտության ուղրտում միջազգային համագործակցության ընդլայնման ու զարգացման նպատակով կոմիտեի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև համագործակցության մասին» համաձայնագիրը, իսկ 2008 թվականի մարտի 25-ին ստորագրվել է ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև մտադրությունների հուշագիրը: Մշակվել է նաև «ՀՀ ԿԳՆ և Ֆրանսիայի Հանրապետության Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի միջև գիտական համագործակցության մասին» պայմանագիր, որը ստորագրվել է 2009 թ. հունվարի 20-ին:

**«Panorama.am» ինտերնետային լրատվամիջոց**

**16:30 04/02/2009**

**Ազգային ռադիո,  
«Ռ-ադիոլուր» 04.02.2009 16:10**

**Գիտության կոմիտեի մեկ տարին**

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կառավարման ոլորտում, հանրապետության նախագահի հրամանագրով, 2007- ին ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն, որը մշակում է իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ամփոփել է գործունեության մեկ տարվա արդյունքներն ու խոսել 2009-ի անելիքների մասին:

Գիտության պետական կոմիտեն նոր ձեւավորվող աշխատակազմի միջոցով իր մեկամյա գործունեությունն իրականացրել է մի քանի կարեւորագույն ուղղություններով՝ գիտության ոլորտի բարեփոխումներ, իրավական դաշտի կատարելագործում, միջազգային գիտական եւ գիտատեխնիկական համագործակցություն: Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի փոխանցմամբ՝ 2008-ին ձեւավորվել է Գիտության պետական կոմիտեի կայքէջը, որը հնարավորություն է տալիս հետեւել կառույցի գործունեությանը, ծրագրերին ու ներկայանալ հետաքրքիր առաջարկություններով: ցր

ԳԱԱ կազմում այսօր գործում են 33 ինստիտուտներ եւ կենտրոններ, ԿԳ նախարարության կազմում՝ 23 գիտական հիմնարկներ: Բանախոսը ցավով նշում է, որ գիտական հիմնարկների մոտ 80 տոկոսը գտնվում են մայրաքաղաքում: «Կոմիտեն կօժանդակի այն ծրագրերին, որոնք թույլ կտան գիտությամբ զբաղվելու հնարավորություն սպահովել նաեւ մազերում», - ասում է կոմիտեի նախագահը:

2008- ին Հայաստանում իրականացված միջազգային ծրագրերի ընդհանուր արժեքը հասնում է մինչեւ 7 միլիոն դոլարի: Սամվել Հարությունյանի խոսքով՝ գրանտային ծրագրերի ոլորտում Հայաստանը բավականին ակտիվ է եւ դա են վկայում թվերը: Գիտության ոլորտի բարեփոխումների ծրագրում առաջնայիններից է համարվում անկախ փորձագիտական համակարգի ստեղծումը, որը հնարավորություն կտա առավել իրատեսորեն գնահատել ներկայացված յուրաքանչյուր գիտական ծրագիր:

«Պետք է ֆինասավորվի ոչ թե անձը, այլ գիտական ծրագիրը: Գիտնականի աշխատավարձը պետք է կախված լինի նրա տված գիտական արդյունքից եւ ոչ թե գործի համահավասարեցման սկզբունքը», - ասում է կոմիտեի նախագահը

Գիտության «երիտասարդացման» ուղղված ծրագրերը եւս օրակարգային են համարվում: «Պետք է գտնել ուղիներ, որպեսզի Հայաստանում ապրող երիտասարդը գիտությամբ զբաղվելու հնարավորություն ունենա», - ասում է բանախոսը: Ոլորտում անելիքները, իհարկե, շատ են եւ 2009-ին ծանր աշխատանք է սպասվում:

Նշենք, որ այս տարի կառավարության հաստատմանը կներկայացվի գիտության ոլորտի զարգացման 10- ամյա ռազմավարությունը:

**Ալիսա Գետրոյան  
Ազգային ռադիո, «Ռ-ադիոլուր»**

**04.02.2009 16:10**

«Ի ՚նձը Ածի ձի ըն»  
լրատվական գործակալություն 20:16/04/02/2009

**В Армении создается институт независимых научных экспертов - глава  
Госкомитета по науке**

**ЕРЕВАН, 4 февраля. /Новости-Армения/.** В Армении создается институт научных экспертов, которые будут проводить экспертизы научных программ, сообщил в среду на пресс-конференции председатель Госкомитета по науке Армении Самвел Арутюнян.

По его словам, система независимых экспертов является шагом к переходу к финансированию науки, посредством грантов исходя из приоритетов экономики Армении. Арутюнян заявил, что первый этап создания этой системы уже завершен, составлен список из 1200 ученых, которые должны заменить действующие сейчас 12 специализированных комиссий. Ученые будут привлекаться к проведению экспертиз научных программ, и получать за это вознаграждения от государства. По словам главы Госкомитета по науке, в список будут также включены армянские ученые из диаспоры и иностранные ученые. «Договоренности об этом уже есть с Францией, Россией и Белоруссией, а в скором будущем не исключено, что будут и с другими государствами», - подчеркнул он. Арутюнян также заявил, что в Армении Госкомитетом по науке, Национальной Академией наук Армении (НАН РА) и Министерством диаспоры совместно разработана программа «Консолидации потенциала армянских ученых». Программа призвана вовлечь в научные программы, осуществляемые в Армении армянских ученых из диаспоры. -0-

Ի ՚նձը Ածի ձի ըն

20:16 | 04/ 02/ 2009

«Ազատություն» ռադիոկայան  
04.02.2008

**5000-ական դոլար 25 գիտական աշխատանքներին**

Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը, որը ստեղծվել է Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո, արդեն 9 տարի դրամաշնորհներ է տրամադրում գիտական խմբերի: Նպատակը՝ գիտնականների արտահոսքը կասեցնելն է: Այս տարի ընտրված խմբերն այսօր ստացան դրամաշնորհները: Դրամաշնորհային ֆոնդն արդեն այս տարի կհատի 1 մլն դոլարի սահմանը: Գիտնականները հիմնականում ներկայացնում են բնագիտական և մաթեմատիկական ոլորտները, հայագիտական թեմայով աշխատող խումբ 2008-ին ընդհանրապես չի եղել, 2009-ին միայն մեկն է: Գիտական խմբերը 25-ն են, որոնցից միայն երեքում են ընդգրկված երիտասարդ գիտնականներ:

Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը, որը ստեղծվել է Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո, արդեն 9 տարի դրամաշնորհներ է տրամադրում գիտական խմբերի: Նպատակը՝ գիտնականների արտահոսքը կասեցնելն է: Այս տարի ընտրված խմբերն այսօր ստացան դրամաշնորհները: Դրամաշնորհային ֆոնդն արդեն այս տարի կհատի 1 մլն դոլարի սահմանը: Գիտնականները հիմնականում ներկայացնում են բնագիտական և մաթեմատիկական ոլորտները, հայագիտական թեմայով աշխատող խումբ 2008-ին ընդհանրապես չի եղել, 2009-ին միայն մեկն է: Գիտական խմբերը 25-ն են, որոնցից միայն երեքում են ընդգրկված երիտասարդ գիտնականներ:

Գիտնականներն ասում են, որ այդ գումարը սիմվոլիկ է, եւ որ դրանով հնարավոր է միայն իրենց աշխատանքների մեկնարկը տալ, կամ մասամբ շարունակել սկսածը: «Բայց քանի որ բացակայում է պետական աջակցությունն ապա՝ եղածն էլ բավական է»-նշում են մասնակիցները:

Այս տարվա 125 ծրագրերից ընտրվել են 25-ը, որոնցից միայն մեկն է հայագիտական թեմայով:

Երիտասարդ գիտնականները կարծում են, որ Հայաստանում այսօր ստեղծված չեն այն պայմանները, որպեսզի երիտասարդ գիտնականները կարողանան գործունեություն ծավալել: Գիտությունների թեկնածու 26 ամյա Գեւորգն ասում է, որ իրենց գիտական աշխատանքերը սկսելուն եւ կյանքի կոնչելուն օգնում են միայն նման մասնավոր դրամաշնորհային ծրագրերը:

Գիտությունների թեկնածու Արմանի պետական աշխատավարձը կազմում է 30 հազար դրամ: Նա կարծում է, որ հարկավոր է ուշադրություն դարձնել գիտաաշխատողների աշխատավարձին:

Գիտության պետական կոմիտեն առաջիկայում նախատեսում է ներդնել անկախ փորձագիտական համակարգ, որն ավելի օբյեկտիվ գնահատական կտա գիտական ծրագրերին: Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը կարծում է, այս համակարգի ներդրմամբ, թեմատիկ ծրագրերը կամաց-կամաց իրենց տեղը կգիջեն դրամաշնորհային ծրագրերին: Ասել է թե պետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններով կհայտարարվեն գիտական աշխատանքների դրամաշնորհային մրցույթներ:

**Նարինե Ղալեջյան**

**«Ազատություն» ռադիոկայան  
04.02.2008**

**«ԱՌԿԱ» ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ**

**04/02/2009 16:19**

**МНТЦ ПРЕДОСТАВИЛ В ДЕКАБРЕ АРМЯНСКИМ УЧЕНЫМ ГРАНТЫ В РАЗМЕРЕ \$1,2 МЛН. - ГЛАВА ГОСКОМИТЕТА ПО НАУКЕ**

ЕРЕВАН, 4 февраля. /АРКА/. Армянские ученые получили в декабре 2008 года гранты на общую сумму в \$1,2 млн. от Международного научно-технического центра (МНТЦ), сообщил в среду на пресс-конференции председатель Госкомитета по науке Армении Самвел Арутюнян.

“По сумме средств, полученных от МНТЦ, ученые Армении уступили только своим российским коллегам”, - отметил он.

Он сообщил, что из \$1,6 млн. и 3,8 млн. евро, которые МНТЦ выделил на финансирование 19 новых программ в странах СНГ, из них Армения получила 760 тыс. евро и \$300 тыс.

Гранты получили институт молекулярной биологии (\$300 тыс.), ЗАО “Научно-исследовательский институт биотехнологий” (450 тыс. евро) и Ереванский государственный политехнический университет (310 тыс. евро). Арутюнян отметил, что армянские ученые очень высоко ценятся в мире, и ежегодно получают около 7 млн. долларов грантов на осуществление различных научных программ. По прогнозам Госкомитета по науке, эта сумма в 2009 году возрастет на 20 %.

Международный научно-технический центр (ISTC) - это межправительственная организация, учрежденная в 1992 году на основании соглашения между Европейским Союзом, Российской Федерацией, США и Японией. Позднее к нему присоединились Норвегия и Корея. ISTC со штаб-квартирой в Москве, предоставляет ученым-оружейникам из государств СНГ (Армения, Беларусь, Грузия, Казахстан и Кыргызстан) возможности для переориентирования их на научную деятельность в мирных целях.

Армения присоединилась к МНТЦ в 1994 году. В Армении соглашение об учреждении международного научно-технического центра было ратифицировано парламентом РА в 1997 году, а в 1998 году было создано региональное отделение ISTC. -0-

**04/02/2009 16:19**

## «Власть добралась до науки» հոդվածը

### «Поиск» ԹԵՐԵՅԱՆԻ

06.03.2009

Ученые Армении давно жаловались, что Министерство образования и науки занимается в основном образовательными вопросами и до науки у него “руки не доходят”. Для того чтобы исправить эту ситуацию, в октябре 2007 года указом президента был создан Госкомитет по науке. Однако это решение многие сочли половинчатым, так как комитет входит в структуру Минобрнауки РА и функционирует в обширном холле министерства, где были сооружены временные закутки из стекла и пластмассы. Тем не менее коллектив госкомитета уже успел сделать много полезного, о чем отчитался на пресс-конференции его председатель Самвел Арутюнян.

За прошедший год комитет успел провести инвентаризацию научных учреждений и “перепись” ученых. Была разработана форма “Паспорта научного учреждения РА” и осуществлена паспортизация около 100 организаций, занимающихся научной и научно-технической деятельностью. Зафиксировано состояние их материально-технической базы, зарегистрированы темы исследований и международного сотрудничества. ГКН создал базу данных, в которую внесены сведения об ученых, работающих в научных учреждениях и вузах страны, а также за границей, уточнил число специалистов, имеющих ученую степень.

На основе полученных данных комитет провел анализ состояния этих учреждений, результаты которого были представлены правительству. Оказалось, что примерно 80% этих организаций расположены в столице, в связи с чем С.Арутюнян обещал расширить проведение научных исследований в регионах республики.

Кроме того, ГКН разработал критерии и принципы финансирования заявок научных мероприятий, а также программу “Объединения потенциала армянских ученых”. Она предусматривает участие зарубежных армянских ученых в реформировании научной сферы на родине. В частности, с их помощью будет осуществляться независимая экспертиза исследований. Вопрос об этом назрел, так как Армения - маленькая страна и местные специалисты сразу же догадываются, чью работу они оценивают, если даже в ней не указана фамилия автора.

В активе Госкомитета также программа омоложения науки. Часть предусмотренных в ней мер уже реализована в прошлом году. В частности, в 2008 году были профинансированы только те работы, в которых участвовали магистры или аспиранты, причем их доля в научных группах должна была составлять не менее 25%. При рассмотрении заявок на участие в конференциях предпочтение было отдано ученым, возраст которых не превышал 35 лет. При финансовой помощи госкомитета организованы две молодежные школы - для математиков и для механиков. А в этом году планируется проведение конкурса заявок научных тем, предназначенных для ученых не старше 35 лет.

И, наконец, глава ГКН сообщил, что комитету предоставлены два этажа в одном из институтов Национальной академии наук и после ремонта он переедет в новое здание. По поводу отпочкования от Минобрнауки С.Арутюнян ничего конкретного не сказал, лишь выразил надежду, что это когда-нибудь произойдет.

**Григор ЭМИН-ТЕРЬЯН**